Մասնագետները նշում են, որ Այրթիջանից Թուրքիա խողովակաշարի ամենակարճ ուղին անցնում է Հայաստանով: Սակայն "Նարապոյի հակամարտությունն անհրաժեշտ է դարձնում այդ ուղեգիծը: Արեւմուտքի երկրները դեմ են Իրանով նավթամուղի անցկացմանը, քանի որ Թեհրանին համարում են անհուսալի գործընկեր: Գոյություն ունեցող տարբերակներից մեկի համաձայն, ադրբեջանական նավթն արդեն առկա նավթամուղով դեպի է հասցվի Նովոռոսիյսկ, սակայն հետագայում Սամսուն, այնտեղից էլ խողովակաշարով Թուրքիայի միջերկրածովյան ափ: Բայց այստեղ դնում է էական ուղղում մտցնել: Եթե Թուրքիան փորձի անցկացնել իր ծրագիրը, այն չի իրականանա, քանի որ նավթամուղն անցնելու է Հյուսիսային Քրդստանի տարածքով.

Ռուսաստանի տարածքից դուրս անցկացվող խողովակաշարերի համակարգը կարող է արմատապես փոխել այդ տարածաշրջանի խաղաքարտերի դիրքերը: Այդ դեպքում Ռուսաստանի ազդեցությունը կարող է բարձրանալ ոչ միայն Միջին Ասիայում եւ Կովկասում, այլեւ Բալկանյան թերակղզում:

1995 թ. հոկտեմբերի սկզբներին Միջազգային նավթային կոնսորցիումի 12 դասվիրակություններ Լոնդոնում քննարկեցին կասպիական նավթի տեղափոխման հնարավոր տարբերակները: Կոնսորցիումն առաջարկեց դա անել երկու նավթամուղներով Չեչնիայով Նովոռոսիյսկ, այսինքն Ռուսաստանի տարածքով, եւ Վրաստանի ու Թուրքիայի տարածքներով:

Բայց այստեղ հարկավոր է հաշվի առնել մեկ գործոն: Թուրքիայի կառավարող շրջանները, անկասկած, թաքնում են երկրի հարավարեւելյան նավթաբեր գոտուն անցկացնելու վտանգը: Այդ շրջանում գործող քուրդ գրոհայիններն կվտանգեն խողովակաշարի անցկացմանը: Քրդական աշխատավորական կուսակցությունը, որը 10 տարուց ավելի զինված պայքար է մղում Թուրքիայի քրդերի ազգային իրավունքների ճանաչման համար, դեմ է առանց իր գիտության թուրքական Քրդստանում որեւէ կարգի մտնելական գործունեության ծավալմանը: Քրդական շրջաններում իրավիճակի անկայունացման հետեւանքով 1993 թ. սեպտեմբերի 30-ին «Մարիկ» ընկերությունը Բաքվանի շրջանում դադարեցրեց նավթի արդյունահանումը: 1993 թ. օգոստոսի 12-ին ընկերության յոթ աշխատակիցներ կալանավորվել էին Քրդստանի ժողովուրդների ազատագրման բանակի ջոկատների կողմից: Դեռեւս «Մարիկից» պահանջել էին այդ բանակին հատուկ հարկ վճարել Քրդստանում նավթի արդյունահանման դիմաց կամ շրջանում դադարեցնել բոլոր աշխատանքները: Բանն այն է, որ Քրդստանի ազատագրման ազգային ճակատը (ՔԱԱՇ) շրջանում գործող բոլոր ֆիրմաներից եւ ընկերություններից պահանջում է հարկերը վճարել ի՛նքն եւ ոչ թե Անկարային: Հակառակ դեպքում ֆիրմաները դեմ է դադարեցնեն գործունեությունը:

Դեռ 1993 թ. ՔԿԿ-ի ղեկավար Աբդուլլահ Օջալանը դեմ մի անգամ հայտնվել քրդական տարածքներով նավթամուղ անցկացնելու Թուրքիայի կառավարության ծրագրերին: 1994 թ. սեպտեմբերի 20-ին ՔԱԱՇ ներկայացուցչությունը «դարի պայմանագրի» բոլոր մասնակիցներին հիշեցրեց, որ ճակատը «բույլ չի տա Քրդստանում նավթամուղ կառուցել, առանց քուրդ ժողովրդի արդարացի բաներ նկատի ունենալու»:

Այսպիսով, վաղ թե ուշ բոլոր բահագրքիր երկրները ստիպված կլինեն գտնել քրդական խնդրի քաղաքական լուծումը եւ առանց միայն նավթամուղ կառուցել:

«ԵԵԶԱԿԻՐՍՍՅՍ ԳԱԶԵՏԱ»
15 ՄԱՐՏ.96

Վիտամինների ավելցուկը նույնպես վնասակար է

Չափազանց մեծ քանակությամբ ընդունվող վիտամիններն ու հանքային աղերը ոչ միայն չեն ամրապնդում մեր օրգանիզմը, այլեւ կարող են հարուցել զանազան ծանր հիվանդություններ, օրինակ, քաղցկեղ կամ սրտանոթային հիվանդություններ: Այս հետեւությունն են հանգել Ֆրանսիայի սպառման, մրցակցության եւ խարդախության դեմ պայքարի հարցերի գլխավոր վարչության բժշկական փորձագետները, ուսումնասիրելով ամենատարածված A, D, E, B-6, C վիտամինների, ինչպես նաեւ սելենիումի, ցինկի եւ ֆտորի ազդեցությունը:

Ֆրանսիացիները հակված են վիտամիններին վերագրել բուժիչ այնպիսի հատկություններ, որոնք վիտամինները երբեմն չունեն, եւ դրանք օգտագործում են չափազանց մեծ քանակությամբ. ընդգծվում է փորձագետների զեկուցագրում: Ամեն տարի նրանք 4 միլիարդ ֆրանկի վիտամիններ են ծծում բերում: Այդ սովորությունը Ֆրանսիա է մուտք գործել ԱՄՆ-ից ներմուծվող հարստացված մթերքների հետ մեկտեղ, որոնցում, բժիշկների գնահատման համաձայն, վիտամինների ամենօրյա բույլատրելի չափաքաժինը գերազանցված է 10-50 անգամ: Ուստի Ֆրանսիայի բժիշկները սահմանել են վիտամինների եւ հանքային աղերի ամենօրյա սպառման առավելագույն չափը: Ինչ վերաբերում է ամենատարածված C վիտամինին, դրա օրական չափաքաժինը կազմում է 1000, իսկ վիտամին E-ինը՝ 40 մգ: Մասնագետների կարծիքով, համակցված սնունդի դեպքում մարդը մի՛ch էլ ստանում է այդ նյութերի անհրաժեշտ քաժինը:

Ավելցուկները եւ մասնավորապես A եւ D վիտամինները օրգանիզմից դուրս չեն գալիս եւ կուտակվելով հարուցում են վնասակար երեւույթներ: Ավելին, հղիության ժամանակ A վիտամինի չափազանց շատ օգտագործումը կարող է կործանարար կերպով անդրադառնալ սերնդի վրա եւ առաջացնել արգանդում գտնվող պտղի ծեւախախտում:

«ՍՈՆՂ»-«ԻԶՎԵՍՏԻԱ»

ՀԱՄԱՌՈՏ

Գորբաչովը կմասնակցի նախագահական ընտրություններին

ՍՈՍԿՎԱ, 22 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Միխայիլ Գորբաչովը, որը վերջին ժամանակներս հայտնել էր Ռուսաստանի նախագահական ընտրություններում իր թեկնածությունը դնելու մտադրության մասին, մարտի 21-ին այդ մասին հայտարարեց պաշտոնապես: Պաշտոնական հայտարարությունը Գորբաչովը կարդաց Սանկտ Պետերբուրգի մանկավարժական հաստատություններից մեկում: Մեկնաբանների խոսքերով, Գորբաչովը Ռուսաստանի նախագահական ընտրություններում հաղթելու գրեթե ոչ մի հնարավորություն չունի: Նրանք ասում են, թե հասարակական հարցումների արդյունքում Գորբաչովն ստացել է ձայների միայն մեկ տոկոսը: Վերջերս տված մի մամլո ասուլիսի ժամանակ Գորբաչովն ասել է, թե իր նպատակն է ներկա վարչակարգի եւ կոմունիստական արմատականության նկատմամբ ստեղծել այլընտրանք:

Արեւելյան Սլավոնիայում սերբերը քարկոծեցին Մադլեն Օլբրայթին

ՍԱՐԱԵՎՈ, 22 ՄԱՐՏ, ՓԱՍՏ-ԱԼ: Մարտի 21-ին սերբերը հայհոյեցին ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպան Մադլեն Օլբրայթին եւ քարկոծեցին այն ավտոբուսը, որով վերջինս ուղեւորվում էր խորվաթիայում սերբերի վերահսկողության տակ մնացած վերջին տարածքով՝ Արեւելյան Սլավոնիայով: Դեմքը դարձահեց այն ժամանակ, երբ Օլբրայթը դուրս եկավ Բուկովարիի փողոցներից մեկում: Տիկնոջ կեցվածքը խորվաթիայի սերբերին ստիպել է նրան համարել ամերիկյան ամենամեծ բանսարկու: Քարկոծման ժամանակ Օլբրայթն անմիջապես նստել է ավտոմեքենան: Կոտրվել են պատուհաններից երկուսը: Նախնական հաղորդագրությունների համաձայն, տուժածներ չկան: Հիշեցնենք, որ Արեւելյան Սլավոնիան սերբերը խորվաթիայից գրավել են 1991 թվականին: Այն ներկայումս գտնվում է ՄԱԿ-ի վարչակազմի վերահսկողության ներքո եւ պետք է երկու տարվա ընթացքում ետ վերադարձվի խորվաթիային:

Քրիստոֆերը ոգեւորված «Ազատությամբ»

ՊՐԱՀԱ, 22 ՄԱՐՏ, ՓԱՍՏ: Մարտի 21-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը Պրահա կատարած իր եռօրյա այցի ավարտին, որի ընթացքում հանդիպում էր ունեցել կենտրոնական եւ արեւելյան եվրոպայի 12 երկրների արտգործնախարարների հետ, այցելեց «Ազատությամբ» ռադիոկայանի տնօրեն Բեվին Քլոսը: Կայանի աշխատակիցների առջեւ ունեցած ելույթի ժամանակ Քրիստոֆերն ընդգծեց, թե ինքը խիստ ոգեւորված է այն աշխատանքով, որ ծավալում է «Ազատություն» ռադիոկայանը: «Դուք ծայնատփում եք այնքան շատ լեզուներով եւ հենց այն տարածաշրջանի համար, որ մեր հիմնական մտահոգությունների առարկան է: Հաճախ ձեր նկատմամբ վերաբերմունքը տեղավորվում է ընդամենը պաշտոնական համեստ ծեւակերպումներում կամ բյուջեի հոդվածներում, բայց հիմա, վերադառնալով Վաշինգտոն, ես կփոխանցեմ նաեւ իմ անձնական ոգեւորությունը», ասաց Ու. Քրիստոֆերը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բեռլինի բյուջեն 37 մլրդ մարկ պակասորդ ունի

Միացյալ Գերմանիայի նոր մայրաքաղաք Բեռլինը հայտնվել է ֆինանսական սնանկացման եզրին. առաջիկա տարիներին հարկավոր է վերացնել քաղաքի բյուջեի 37 մլրդ մարկի հասնող ծեղվածքը: 1996 թ. այդ թիվը պետք է կրճատվի 7 մլրդ-ով, իսկ եկող տարի՝ եւս 10 մլրդ-ով: Բեռլինի քաղաքային իշխանությունները, որոնց կազմում կան քրիստոնեա-դեմոկրատներ եւ սոցիալ-դեմոկրատներ, հրաժարակել են մայրաքաղաքի ֆինանսական վիճակի առողջացման ընդարձակ ծրագիր: Նախատեսվում է էական կրճատումներ կատարել հանրային ծախսերի բնագավառում: Ներկայումս Բեռլինի 3 համալսարաններում, ինչպես նաեւ ինստիտուտներում, սովորում են 145 հազար ուսանողներ: Առաջիկա տարիներին նրանց թիվը պետք է իջեցվի 85 հազարի: Մունիցիպալ վարչակազմում ասենք՝ նաեւ պետք է կրճատվի 17 հազար աշխատատեղ: Բացի դրանից, քաղաքապետարանը մասնավոր անձանց կվաճառի քաղաքի բազմաթիվ հողատարածքներ եւ շենքեր: Ճգնաժամը Բեռլինին հարվածում է հենց այն պահին, երբ արագորեն փոխակերպվող մայրաքաղաքը շինարարական վիթխարի աշխատանքներ է իրականացնում եւ պատրաստվում է դառնալ 2000 թ. ընդունել երկրի կառավարությունն ու խորհրդարանը, որոնք ներկայումս գտնվում են Բոննում:

«ՊՈՒԼՍ»

ԱՆՐԱՎԱՐՀ

Հասարակությունից մեկուսացածների պատասխանը երբեմն ահավոր է լինում

Բոլորիս հիշողության մեջ դեռ թարմ է շոտլանդական Դանբլեյնի փոքրիկ քաղաքի ողբերգությունը, երբ զինված մարդասպան Թոմաս Համիլտոնը տեղի դպրոցում արյունալի ջարդ սարքեց սպանելով 4-ից 6 տարեկան 16 երեխայի ու նրանց ուսուցչուհուն: Հոգեբանների այդ տիպի մարդասպանների հոգեբանական դիմագծերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանց հոգեբանական դիմանկարներն ընդհանուր շատ բաներ ունեն: Այդպիսի ոճրագործները, որպես կանոն, 25-40 տարեկան տղամարդիկ են: Նրանք սովորաբար ինքնամփոփ ու միայնակ են, հասարակության մեջ իրենց մերժված են զգում եւ ի վիճակի չեն որեւէ մարդկանց հետ սերտ հարաբերություններ հաստատել: Այդպիսի մարդիկ զենքի՝ ու զինվորական ամեն ինչի հանդեպ հաճախ են հիվանդագին հակումներ ունենում: 87 թվականին անգլիական Հանգերֆորդ փոքրիկ քաղաքում 14 մարդ սպանած Մայքլ Ռայանն, օրինակ, երկար տարիներ զենքի հավաքածուներ էր կազմում: Ուսումնասիրվող տեսակի մարդասպանների կյանքը հաջողված չի՝ լինում եւ նրանք ճախորդներ են դառնում, ինչը նրանց մեջ հասարակության կողմից մերժված լինելու զգացում է ծնում: Հոգեբան-հետազոտողների կարծիքով այդպիսի ոճրագործների զոհերը նրանց գիտակցության մեջ երբեմն իրենց սեփական հոգեբանական կամ ֆիզիկական խնդիրն, օրինակ, դպրոցական տարիների ծանր հիշողությունների հետ են զուգորդվում: Որքան էլ տարօրինակ թվա, ամենեին դարաստիր չէ, որ այդ տիպի ոճրագործները հոգեկան հիվանդություններ ունենան: Հոգեբաններն համարում են, որ հանցագործությունը զանգվածային սպանության գործողությունը, մարդասպանի իրեն սիրած համարհեղ աշխատանքին տրված վերջնական ու դրամատիկ դաս[illegible] է: Այդ զանգվածային [illegible]թյունները, որպես օրենք, [illegible] դեպքի իմքնասպանությամբ [illegible] վարտվում, որն ամեն [illegible] աշխատանքին [illegible] այլեւս անհնար [illegible]

«ՊՈՒԼՍ»

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Երեկ Նանսում բացվեց «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» ցուցահանդեսը

Երեկ առավոտյան Հայաստանի դաշտանական դասվիրակությունը վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ մեկնեց Փարիզ՝ մասնակցելու նույն օրը, ժամը 17-ին Նանսի Դոբրե թանգարանում բացվող «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» բացառիկ ցուցահանդեսին: Մարտի 20-ին Ֆրանսիայի Լուար Ատլանտիկ նահանգի տրանսպորտային խորհրդի ժամուլի եւ հանրության հետ կապերի տնօրենությունը Ֆրանսիայում գործող ֆրանսիացի եւ հայ ժամուլի ներկայացուցիչներին հրավիրել էր Նանս՝ առաջինը այցելելու ցուցահանդես: Ֆրանսիական ժամուլի հեղինակավոր թերթերի ներկայացուցիչներից բաղկացած 18 հոգիանոց լրագրողների խմբին ընկերակցում էին ՐԱՖՖԻ Հերմոն Արախը, Հակոբ Պալյանը եւ Արմի Թոթոյանը: Ստորեւ մեր թղթակից ՐԱՖՖԻ Հերմոն Արախի նյութը.

գրությունները՝ «Լուար Ատլանտիկ դեպարտամենտի ընդհանուր խորհուրդը ներկայացնում է «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» մարտի 23-ից սեպտեմբերի 15-ը», իսկ ամենաներքեւում Դոբրե թանգարան մահագրությունն էր, քանի որ այս հսկա գործի իրականացման համար մեծ աշխատանք էր տարել թանգարանի գլխավոր տնօրեն Ժակ Սանտրոն: Պարոն Սանտրոն թանգարանում տարջ 1.5 ժամ բացատրություններ տվեց հայկական հին գանձերի արժեքի մասին՝ հարեւանությամբ հիացմունքային տարբեր ածականներ ու որակումներ օգտագործելով: Ֆրանսիական մամուլի ներկայացուցիչները ուշադրությամբ էին լսում եւ արձանագրում պարոն Սանտրոյի հաղորդած յուրահատուկ տեղեկությունները: Անդրադառնալով ցուցահանդեսին Դոբրե թանգարանի գլխավոր տնօրենը պատմեց նաեւ, թե ինչպես եւ ինչ միջոցներով ծնվեց Նանսի նման քաղաքում Հայաստանին նվիրված ցուցահանդես կազմակերպելու գաղափարը: 89-ին Նանսի բնակիչ պարոն Ալպեր Ֆոշեն, մասնագիտությամբ դեղագործ եւ կենսաբան, Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի առիթով «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության հետ Գյումրիի եւ Շիրակի դաշտավայրեր էր մեկնել: Գյումրիի թանգարանի տնօրեն պարոն Համազասպ Խաչատրյանը լավ տպավորություն էր թողել Ֆոշեի վրա: Խաչատրյանը խնդրել էր հետաքրքրվել, թե կ՚ա



չուներ, բայց առաջարկը լսելուց հետո որոշեց գործի դասասխանատվությունը ստանձնել: «Հնագիտության, դասմագիտության տեսակետից հայկական բնաբխարհում հայկական չափանիշներով շատերին զարմացնող մեծ հարստություններ կան», լրագրողներին ասաց թանգարանի տնօրենը: Ցուցահանդեսը կբարունակվի այս տարի հունիս ամսին Փարիզի ազգային գրադարանում, որտեղ կցուցադրվեն Հայաստանի դասմության ազգային թանգարանի, Երեւանի հնագիտության թանգարանի մի շարք նմուշներ: Նանսի ցուցահանդեսում կցուցադրվեն 300 կտոր հնագիտական արժեքավոր նյութեր: Դոբրեի թանգարանում

„Ֆրանսիայում մի թանգարան, որը ցանկություն կհայտնի համագործակցել: Ֆրանսիացի բժիշկ-գիտնականը գտել էր հայրենի քաղաքի թանգարանի տնօրենին: Դոբրե թանգարանի տնօրեն պարոն Սանտրոն մինչ այդ հայկական հնագիտության մասին գաղափար

բացվում է հայկական խանութ, որտեղ կվաճառվեն հնաոճ եւ ժամանակակից մի շարք հայկական հուշանվերներ: Այս ցուցահանդեսի իրականացման համար Փարիզի ակադեմիայի գրադարանը, Ազգային գրադարանը, դրամագիտության թանգարանը, Լոնդոնի

Երեկ Նանսում բացվեց «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» ցուցահանդեսը

գրությունները՝ «Լուար Ատլանտիկ դեպարտամենտի ընդհանուր խորհուրդը ներկայացնում է «Հայաստան. ակունքներից մինչեւ 4-րդ դար» մարտի 23-ից սեպտեմբերի 15-ը», իսկ ամենաներքեւում Դոբրե թանգարան մահագրությունն էր, քանի որ այս հսկա գործի իրականացման համար մեծ աշխատանք էր տարել թանգարանի գլխավոր տնօրեն Ժակ Սանտրոն: Պարոն Սանտրոն թանգարանում տարջ 1.5 ժամ բացատրություններ տվեց հայկական հին գանձերի արժեքի մասին՝ հարեւանությամբ հիացմունքային տարբեր ածականներ ու որակումներ օգտագործելով: Ֆրանսիական մամուլի ներկայացուցիչները ուշադրությամբ էին լսում եւ արձանագրում պարոն Սանտրոյի հաղորդած յուրահատուկ տեղեկությունները: Անդրադառնալով ցուցահանդեսին Դոբրե թանգարանի գլխավոր տնօրենը պատմեց նաեւ, թե ինչպես եւ ինչ միջոցներով ծնվեց Նանսի նման քաղաքում Հայաստանին նվիրված ցուցահանդես կազմակերպելու գաղափարը: 89-ին Նանսի բնակիչ պարոն Ալպեր Ֆոշեն, մասնագիտությամբ դեղագործ եւ կենսաբան, Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի առիթով «Բժիշկներ առանց սահմանի» կազմակերպության հետ Գյումրիի եւ Շիրակի դաշտավայրեր էր մեկնել: Գյումրիի թանգարանի տնօրեն պարոն Համազասպ Խաչատրյանը լավ տպավորություն էր թողել Ֆոշեի վրա: Խաչատրյանը խնդրել էր հետաքրքրվել, թե կ՚ա

չուներ, բայց առաջարկը լսելուց հետո որոշեց գործի դասասխանատվությունը ստանձնել: «Հնագիտության, դասմագիտության տեսակետից հայկական բնաբխարհում հայկական չափանիշներով շատերին զարմացնող մեծ հարստություններ կան», լրագրողներին ասաց թանգարանի տնօրենը: Ցուցահանդեսը կբարունակվի այս տարի հունիս ամսին Փարիզի ազգային գրադարանում, որտեղ կցուցադրվեն Հայաստանի դասմության ազգային թանգարանի, Երեւանի հնագիտության թանգարանի մի շարք նմուշներ: Նանսի ցուցահանդեսում կցուցադրվեն 300 կտոր հնագիտական արժեքավոր նյութեր: Դոբրեի թանգարանում

բացվում է հայկական խանութ, որտեղ կվաճառվեն հնաոճ եւ ժամանակակից մի շարք հայկական հուշանվերներ: Այս ցուցահանդեսի իրականացման համար Փարիզի ակադեմիայի գրադարանը, Ազգային գրադարանը, դրամագիտության թանգարանը, Լոնդոնի

«Բրիթիշ մյուզիումը», Հայաստանի հնագիտության եւ ազգագրության թանգարանը, Լուվրի արեւելյան հնությունների բաժանմունքը, Սարդարապատ, Էրեբունի, Գյումրիի թանգարանները տրամադրել են իրենց մոտ գտնվող հայկական գանձերը: Պատվո կոմիտեում են ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսիսը, Լուար Ատլանտիկ նահանգի խորհրդի նախագահ պարոն Լյուկ Դիժուան, Հայաստանում Ֆրանսիայի նախկին դեսպան տիկին Ֆրանս դը Հարբինգը եւ Ֆրանսիայում ՀՀ դեսպան պարոն Վիգեն Չիտչյանը: Կազմկոմիտեում ընդգրկված մեծաթիվ ցուցակը գլխավորում է ՀՀ մշակույթի առաջին փոխնախարար տիկին Անելկա Գրիգորյանը: Գիտական միջազգային կոմիտեի անդամ են ինչպես հայազգի (Ռուբեն Բաղալյան, Աիդա Դեւեջյան, Լարիսա Եգանյան, Սիմոն Հմայակյան, Ժորես Խաչատրյան, Լյուդվիգ Խաչատրյան եւ այլք), այնպես էլ ֆրանսիացի (Պոլ Բեռնար, Բեռթրիս Անդրե Սալվինի, Ֆիլիբոն, Ժան Պիեռ Մահե, Կլոդ Մուրաֆյան, Պիտրովսկի եւ այլք) ճանաչված գիտնականներ: Հաղորդակցության գծով մասնակցում է «Սիտուտֆայ հետազոտական կենտրոն» CRAA-ն եւ նրա աշխատակից Էվելին Քեյանը:

ՀԳ. Երեկ ուշ երեկոյան ստացանք նաեւ մեր մյուս ֆրանսաբնակ թղթակից Գրիգոր Ամիրզայանի տեղեկությունը ցուցահանդեսի հրավիրատոմսով:

ՀԱՄԱՌՈՏ

Արմեն Չիգարխանյանը «Ռուսաստանի հերոս»

Վերջերս նախագահ Բորիս Ելցինը «Ռուսաստանի հերոս» ոսկե աստղ եւ այլ կառավարական պարգեւներ հանձնեց ռուսական մշակույթի, գիտության եւ արտադրության մի խումբ գործիչների: Բարձրագույն գնահատանքի արժանացավ նաեւ կինոյի ու թատրոնի նշանավոր դերասան Արմեն Չիգարխանյանը:

ԱՅՍՕՐ-32

Հայկական երգի հաղթանակը Մոսկվայում

Օրս ավարտված Հանառուսաստանյան երաժշտական փառատոնում առաջին մրցանակի արժանացավ Մոսկվայի հայկական կամերային երգչախումբը: այն ստեղծվել է յոթ տարի առաջ՝ ժողովրդավարական արհիս էդվարդ Միրզոյանի նախաձեռնությամբ: Ղեկավարն ու դիրիժորն է Նելլի Անդրեասյանը:

ԱՅՍՕՐ-32

Նյու Յորքի ոստիկանությունը սպառնում է արտաքսել «Օագիս» ռոք-խմբին

Նյու Յորքի ոստիկանությունն անգլիական «Օագիս» ռոք-խմբի մասնակիցներին պատշաճաբար նախազգուշացրել է, որ իրենք կարտաքսվեն երկրից, եթե շարունակեն խուլիգանական գործողություններ կամ թմրադեղեր օգտագործեն: Ոստիկանության ներկայացուցիչն ասել է. «Եթե նույնիսկ երաժիշտները ռոք-աստղեր են, դա նրանց չի ազատում պատասխանատվությունից»: Միաժամանակ նախկին բիթլզ Ջորջ Հարիսոնն օրերս հայտարարել է, որ

ինքը «Օագիսը» ակնառու խումբ չի համարում: «Նրանք բավական լավ երաժշտություն են նվագում, բայց միջակություններ են, եւ մենք այդ ամենն արդեն վաղուց լսել ենք», ասել է 53-ամյա հայկական երաժիշտը: Այս գնահատականը բավական կտրուկ է «Օագիսի» մասնակիցներին, քանի որ նրանք միշտ ընդգծել են, թե իրենց ստեղծագործության վրա ինչպիսի ազդեցություն է գործել «Բիթլզի» երաժշտությունը, իսկ Wonderful երգը գրվել է Ջորջ Հարիսոնի համանուն ալբոմի տպավորության ներքո:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

«Նազարեթը» Ռուսաստանում՝ հին հիթերով

Հնգամյա ընդմիջումից հետո, Ռուսաստան է այցելել շոտլանդական «Նազարեթ» ռոք-խումբը: երաժիշտները համերգներով հանդես են եկել Սանկտ Պետերբուրգում, Մուրմանսկում, Տվերում, Սամարայում, Չելյաբինսկում, Պերմում եւ Եկատերինբուրգում: խումբը ելույթ է ունեցել նաեւ Մոսկվայի «Լուժնիկի» փոքր սպորտային արենայում: Նրանց ծրագրում տեղ են գտել նախկին հիթերը եւ մի քանի երգ խմբի նոր ալբոմից: Ինչպես նշում են խմբի անդամները, իրենք գոհ են ռուսների ընդունելությունից:

Լեդի Դին հոգում է քաղցկեղով հիվանդների մասին

Արքայադուստր Դիանան ժամանել է Պակիստան: Այնտեղ նրան սպասում էր Միկ Ջագերը՝ «Ռոլինգ Սթոունզի» մեկնակատարը, որի հետ լեդի Դին պետք է անցկացնի մի քանի օր: Նրանք այստեղ են եկել քաղցկեղով հիվանդների համար նախատեսված կլինիկայի համար նվիրատվություններ հավաքելու: Դիանան եւ Միկն իրենց հովանավորությանն տակ են առել Լահոր քաղաքի այդ հիվանդանոցը:

ԿԻՆՈՏՈՒՆ

Ամերիկյան կինոհեղեղը չի սպառնում Փարաջանովի կոգուն

«Ազգի» փետրվարի 29-ի համարում տեղեկացրել էինք Արտասահմանյան երկրների հետ համագործակցության եւ մշակութային կապերի հայկական ընկերությունում կազմակերպված Փարաջանովի երեկոյի մասին: Նախորդ օրը նրա վերջին «Ասուր Քերիթ» ֆիլմից հատվածներ ցույց տվեցին խոսանալով առաջադրում ցուցադրել ամբողջը: Երեկ Կինոյի տան մեծ դահլիճում բազմաթիվ արվեստասերներ դիտեցին 88-ին նկարված ֆիլմը:

Սերգեյ Փարաջանովի «Ասուր Քերիթ» ֆիլմի ավարտական աշխատանքները, որ կատարվում էին 88-ի հունվար-մարտ ամիսներին, կինոաշխարհի մարդկանց շատերի զարմանքը շարժեցին: Սովետական հայտնի դեմքեր եւ ֆիլմի ծայնագրություն... ադրբեջաներենով: «Փարաջանովը երկար երկմտում էր, հետո նոր տեսարաններ ավելացրեց՝ «Ասված մեկ է» եւ «Ոսնահարված սրբավայր»: Ասուրին թաղելու համար էրիստոնեական եկեղեցի են մտնում...», պատմում է ֆիլմի օպերատոր Ալբերտ Յավուրյանը:

Քննադատները երեւի հասկացան, որ ժողովրդի մեջ ապրող հեքիաթը գեղեցիկ գույնով պատմելն է մնայունը, ինչը վերածեց Մանսրոն իր բոլոր ֆիլմերում՝ շարժանկարի պատմությանը տրամադրելով իր նոր կինոմտածողությունը: «Ասուր Քերիթը» (Ալբերտ Յավուրյանն ասում է, որ Փարաջանովը դեռ է եղել ասուրը թաղելիս՝ Դարիք գրելուն) տխուր ֆիլմ է. ավելի շատ մենակ, չհասկացված մարդու

պատմություն, որը, օպերատորի ասելով, Սերգեյ Փարաջանովի 65 տարիների վերջին խոսքն էր: «Նկարահանման հրապարակում նրա ծայնը տիրապետող էր: Կարճամետրաժի համար սցենարի հեղինակն էր Բաղրիթեն (տիտրում նշված է նրա անունը), բայց Փարաջանովը լրացուցիչ տեսարաններ ստեղծեց լիամետրաժի համար: Ֆիլմի բեմադրող օբեքտորը Դավիթ Աբաշիձեն էր, բայց վերջինս հիվանդության պատճառով հրապարակում չէր երեւում: Ու ամենն տեղ նա էր»:

90-ին Մոսկվայում «Ասուր Քերիթը» 4 Նիկա ստացավ՝ տարվա լավագույն ֆիլմ, օբեքտորական, օպերատորական, նկարչական աշխատանքի համար: Մեկ տարի առաջ բեռլինյան փառատոնում նկարչական աշխատանքի համար «Ասուր Քերիթին» արդեն «Ոսկե արջ» ստացել էր, սակայն մրցանակն իսկական հասցեատիրոջը՝ Փարաջանովին հասավ նոմինացիայում:

ԱՆԱՏՈԼ ՀՈՎԱՆԵՓՅԱՆ

ՆԱՆՍԵՆ-135

Մեծ հայասերին նվիրված ցուցահանդես Օսլոյում

Հայտնի է, որ Նորվեգիայի նշանավոր նանագարեւորդ, բեւեռախույզ, օվկիանոսագետ, գիտնական, հումանիստ եւ հասարակական գործիչ Ֆրիտյոֆ Նանսենը եղել է նաեւ մեծ հայասեր: Նրա հեղինակած «Հայաստանը եւ Մերձավոր Արեւելքը» ծավալուն գործը հայկական ցեղասպանության եւ հայ ժողովրդի դատահանգամանքի բնագավառներում կարեւոր վկայություններից է: Այն մի կողմից ձոն է հայ ժողովրդին, նրա տառապանքին ու հերոսական դիմադրության բնական լուսաբանումն է, իսկ մյուս կողմից մեղադրական ակտ հայատպանության հանցավորների եւ արեւմտյան տերությունների անտարբերության նկատմամբ:

Նանսենի ծննդյան 135-ամյակի առնչությամբ Նորվեգիայի կառավարությունը որոշում է կայացրել առաջիկա հոկտեմբերին Օսլոյում կազմակերպել մի ցուցահանդես, որի ցուցանմուշների հարստացման նպատակով դիմել է Անթիլիասի կաթողիկոսարան՝ հայ համայնքից հավաքելու Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի ու գործի հետ կապված բոլոր տեսակի փաստաթղթեր եւ վավերագրական նյութեր եւ դրանք մինչեւ օգոստոս ուղարկել Օսլո: Հանձնված բոլոր նյութերը ցուցահանդեսից անմիջապես հետո պետք է վերադարձվեն իրենց տերերին:

Հ. Ծ.

ԿԱՊԵՐ

Ժնեւում հայկական մշակույթի հնգօրյակն ավարտվեց

Մարտի 11-15-ը Ժնեւի Սեն Ժերվե թատրոնում անցկացվեց հայկական մշակույթի հնգօրյակ: Այս ասիթով տեղական մամուլը բանիցս անդրադարձավ հայկական մշակույթի օրերին, որոնց ընթացքում ցուցադրվեցին կանադահայ կինոբեմադրիչ Ատոմ Էգոյանի «Օրացույց» եւ Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմերը, հայ մշակույթի առաջապահ մասին բանավեճ ծավալվեց, Վահե եւ Արմեն Գոդելները հանդիսություն կազմակերպեցին Ալեքսանդր Թոփչյանի հետ եւ այլն: Ինչպես նշում է «Ժուռնալ դը Ժնեւ» օրաթերթի մեկնաբան Բենժամեն Շեն՝ թերթի մարտի 9-ի եւ 14-ի համարներում, մշակույթի օրերի գլխավոր իրադարձությունը Վանանդոի թատրոնի հյուրախաղերն էին. Վահե Շահվերդյանի (նա այժմ Սունդուկյան ազգային թատրոնի ղեկավարն է) գլխավորած թատրախումբը մարտի 12-15-ը Սեն Ժերվեում ներկայացրեց Չեխովի «Երեք քույրը»: Շահվերդյանի բեմադրությամբ: Մշակույթի օրերն ասիթ դարձան, որ Ժնեւում բնակվող շուրջ 2000 հայերն ավելի լավ պատկերացում կազմեն Հայաստանի ներկա իրավիճակի մասին, ինչպես իրար հետ: Այս բեմադրությունն արդեն մեծ հաջողություն էր ունեցել Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Կիեւում, Վիլնյուսում, Ստրասբուրգում եւ այլուր: Ռուսական թատերական ավանդույթների առկայությունը գրական ու դրամատիկական ոլորտներում բնավ չի նսեմացնում հայ ստեղծագործողների կատարած աշխատանքը: Շահվերդյանի բեմադրությունը դրա վկայություններից է: Թեեւ, ինչպես նշում է բեմադրիչը, գրականության եւ խորհրդային մյուս բոլոր արգելքների վերացումը ժամանակավորապես «ցամաքեցրել է» հեղինակնե-

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՀՈԲԵԼՅԱՆ

Վանիկ Զաֆարյանը՝ ակադեմիկոսը եւ շախմատիստը

Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահը 60 տարեկան է

Կիրսան Իլյումժինով. «Համոզված եմ, որ օլիմպիադան Երեւանում կդառնա շախմատի իսկական տոն»

Ակադեմիկոս ՎԱՆԻԿ ԶԱՖԱՐՅԱՆ
Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահին
Շախմատի 32-ոդ հանրախարհային օլիմպիադայի եւ ՖԻՄԵ-ի 67-ոդ կոնգրեսի կազմակերպչական կոմիտեի նախագահին

Մեծարգո Վանիկ Սուրենի՝

Սրանց շնորհավորում եմ Ձեզ՝ հանրահայտ գիտնականին եւ շախմատային կազմակերպչին 60-ամյակի առթիվ: Արգասաբեր գիտական գործունեությունը հմտորեն զուգակցելով Հայաստանի շախմատային կազմակերպության դեկավարման լայնածավալ աշխատանքների հետ, Դուք հասել եք շոշափելի արդյունքների:

Հայաստանի շախմատային ֆեդերացիան ակնառու դեր է կատարում միջազգային շախմատային շարժման մեջ: Համոզված եմ, որ առաջիկա 32-ոդ հանրախարհային շախմատային օլիմպիադան եւ ՖԻՄԵ-ի 67-ոդ կոնգրեսը Երեւանում կդառնան շախմատի իսկական տոն:

Ցանկանում եմ Ձեզ ամուր առողջություն եւ երկար տարիների կյանք:

Հարգանքներով՝
ԿԻՐՍԱՆ ԻԼՅՈՒՄԺԻՆՈՎ
ՖԻՄԵ-ի նախագահ
Կալմիկիայի Հանրապետության նախագահ

Հայաստանում իշեր կգտնվեն, որ չեն ճանաչում նրան: Անվանի մարմնամարզիկոս, հիմնարար աշխատությունների հեղինակ, ակադեմիկոս, տասնյակ տարիների մանկավարժ, ճարտարագիտական համալսարանի մարթեմատիկայի դեղարտամենտի վարիչ... Այս թվարկումը արդեն բավական էր, որ Վանիկ Զաֆարյանը էաս հանրաճանաչ անձնավորություն լիներ, մանավանդ, որ նա բնավորությամբ հմայիչ ու արտաքուս մարդամոտ է:

Բայց մարթեմատիկայից բացի, Զաֆարյանը նաեւ մեկ, մեծ ու իսկական սեր ունի՝ շախմատը, որտեղ նաեւ բացահայտվել են այս տաղանդավոր մարդու բնդունակություններն ու կազմակերպչական ունակությունները:

Զաֆարյանը հայ առաջին շախմատային վարդեսներից մեկն է, եղել է Հայաստանի չեմպիոն, հաջողությամբ հանդես է եկել համամիութենական մրցումներում: Անգամ այն տարիներին, երբ գիտությունը էաս ժամանակ էր խլում եւ նա հնարավորություն չուներ ակտիվ մրցելույթներ ունենալ, շախմատը չէր մոռացվում: Շախմատիստներ, անկասկած, լավ են հիշում նախ Պետրոսյանի, առա Կասպարովի համաշխարհային մրցախաղերի ժամանակ Վանիկ Զաֆարյանի հետաստաեային մենկնաբանությունները:

Զաֆարյանի կազմակերպչական բնդունակությունները առանձնապես վառ դրսեւորվեցին վերջին տարիներին, երբ նա սկսեց գլխավորել Հայաստանի շախմատային ֆեդերացիայի աշխատանքները: Այն բանում, որ հայկական շախմատը այժմ աշխարհում մեծ հեղինակություն է վայելում, անվիճելիորեն, մեծ է Զաֆարյանի ներդրումը:

Այժմ Զաֆարյանը մեծագույն եռանդով դեկավարում է նաեւ շախմատի երեւանյան համաշխարհային օլիմպիադայի կազմակերպական կոմիտեի աշխատանքները: Ակադեմիկոս Զաֆարյանը հրաշալի է գիտակցում, որ օլիմպիադան Հայաստանի համար էաս ավելին է, քան դարզապես շախմատի համաշխարհային մի հավաք, եւ այս գիտակցությամբ է վարում այդ խոշորագույն իրադարձության նախապատրաստությունը:

Ջերմորեն շնորհավորում ենք Վանիկ Զաֆարյանին ծննդյան 60-ամյակի առթիվ եւ շախմատիստներին ներկայացնում երկու զորեղ դրվագ նրա ստեղծագործություններից:

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. ԶԱՖԱՐՅԱՆ–Ա. ՇՈՖՄԱՆ

1. e4 e6 2. d4 d5 3. Ձc3 Փb4 4. Փd3 de 5. Փxe4 Ձf6 6. Փg5 Ձbd7 7. Փf3 c5 8. a3 cd 9. ab dc 10. bc Ցc7 11. Ցd2 0-0 12. Ձe2 Սd8 13. Նd1 Նe8 14. 0-0 Նb8 15. Ձd4 a6 16. Նfe1 h6 17. Փh4 Ձh7 18. Ձf5 Ձb6 19. Ձe7+, սեւերը հանձնվեցին:

Վ. ԶԱՖԱՐՅԱՆ–Է. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

29. Նxa5+ Սxa5 30. Նa1+ Ձa2 31. Նxa2+ Սb5 32. c4+ dc 33. bc+ Սb4 34. Նa4+, սեւերը հանձնվեցին:

Այս անչափ տոպավորիչ խաղավարտը շախմատային կոմբոդիցիայի գեղեցիկ ստեղծագործություն է հիշեցնում:

ՀԱ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հերթական հաղթանակը էաս ծանր էր «Փյունիկի» համար

Միանձնյա առաջատար՝ Երեւանի «Փյունիկը» ստիպված էր Երեւանյան մեկ այլ թիմի՝ «Վանի» հետ հանդիպումն անցկացնել Արտաքսաֆի քաղաքային մարզադաշտում: Ցավոք, Երեւանում դաստաս է ընդամենը 1 մարզադաշտ՝ «Նաիրին», որն այս օրերին մեծ ծանրաբեռնվածության տակ է, քանի որ սկսվել է նաեւ առաջին խմբի 2-ոդ շրջանը: Վաղ գարնանը «Հրազդանը» ի վիճակի չէ տրամադրել իր խաղադաշտը, քանի որ հեռեւանքները կարող են ծանր լինել: Ինչպես ասաց «Հրազդան» համալիրի գլխավոր տնօրեն Աշոտ Աղաբաբյանը, միայն ադրիլին «Հրազդան» կենտրոնական մարզադաշտը կարող է բացել իր դռները այն էլ այն դեպքում, եթե եղանակները բարենպաստ լինեն: Համենայն դեպս, խաղադաշտերի խնդիրը էաս լուրջ է մեր հանրապետությունում: Մայրաքաղաքում միայն մեկ խաղադաշտով հեռու չես գնա:

Արտաքսաֆի մարզադաշտի բուն խաղադաշտը անհամեմատ ավելի բարվոք վիճակում է, քան Արարատինը: «Փյունիկ»-«Վան» հանդիպումը էաս լարված ստացվեց: Ճիշտ է, առաջին կեսից հետո առաջատարը առջեւում էր 2-0 հաշվով եւ երկու անգամն էլ աչքի է ընկել թիմի նորեկը, ՀՀ երիտասարդական հավաքականի խաղացող Տիգրան Մկրտչյանը, որը ԲԿՄԱ-ից է տեղափոխվել «Փյունիկ», սակայն երկրորդ կեսում «Վանի» ֆուտբոլիստները լարված վիճակում ոչնչացրին թե «Փյունիկի» դեկավարներին եւ թե երկրպագուներին: Կարեն Միխայելյանը կրճատեց հաշվի տարբերությունը: իսկ հանդիպման վերջին ռոմբերին «Վանի» ֆուտբոլիստները կարող էին փոխել նաեւ խաղը: «Փյունիկ» 2-1 հաշվով էաս ծանր, բայց եւ գեղեցիկ հաղթանակ տարավ, իսկ «Վանն» իր հերթին հիանալի ցույց վորություն բողեք՝

ՀՀ առաջնություն,
բարձրագույն խումբ
14-ոդ տուր
«ԿՈՏԱՅՔ»-«ՂԱՐԱԲԱՂ» 1-0 (0-0)
1-0՝ Գագիկ Հովհաննիսյան (1՝

«ՓՅՈՒՆԻԿ»-«ՎԱՆ» 2-1 (2-1)
1-0, 2-0՝ Տիգրան Մկրտչյան (9, 39), 3-0՝ Կարեն Միխայելյան (54):

«ԱՐԱԳԱԾ»-«ԵՐԵՎԱՆ» 1-3 (1-2)
0-1՝ Արմեն Կարապետյան (20), 1-1 Գեւորգ Ալեքսանյան (25), 1-2՝ Ար[illegible] Կարապետյան (42), 1-3՝ Արշակ [illegible]յան (86):

Առաջնության աղյուսակ
մարտի 23-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	14	12	2	0	42-10	38
2. Շիրակ	14	10	2	2	37-16	32
3. Երեւան	14	10	1	3	31-14	31
4. Ցեմենտ	14	8	3	3	34-16	27
5. Արարատ	14	7	3	4	38-16	24
6. Կոտայք	14	6	2	6	21-20	20
7. Դարաքաղ	14	4	3	7	16-18	15
8. ՀՄՄ	14	4	2	8	21-35	14
9. Արագած	14	3	3	8	25-49	12
10. Վան	14	3	3	8	17-32	12
11. Ջանգեզուր	14	3	2	9	18-39	11
12. Ազնավուր	14	0	2	12	13-48	2

Առաջնության ռմբարկումներ

Արա ԱԴԱՄՅԱՆ «Շիրակ»	17
Տիգրան ԵՍԱՅԱՆ «Երեւան»	16
Հովհ. ՔՈՒՄԲԱՐՅԱՆ «Ցեմենտ»	15
Արթուր ՄԱՆՈՒՑՅԱՆ «Ջանգեզուր»	10
Արթուր ԲՈՅԱՐՅԱՆ «Արարատ»	9

ՄԵՐ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻ ԾԱՄԲԱՐՈՒՄ

Գերմանիան դարձյալ առանց Լոթար Մաթեուսի

Գերմանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Բերտի Ֆոգտսը (թիմը 1998 թ. Աշխարհի առաջնության ընտրական փուլում Հայաստանի հավաքականի մրցակիցներից մեկն է) հավաստել է, որ մտադիր չէ հավաքականի կազմում ընդգրկել դրա նախկին ավագ Լոթար Մաթեուսին, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Եղույթների բվով թիմի ռեկորդակիրը, սակայն, հրավիրված է որպես հյուր մասնակցելու Մյունխենում մարտի 27-ին դանիացիների հետ անցկացվելիք ընկերական հանդիպմանը նախորդող հավաքին: Մարզիչը հայտարարել է. «Լոթարը թիմում տեղ չունի: Ազատ դաստաքանի դերը կկատարի Մաթիաս Զամմերը այդ դերում լավագույն ֆուտբոլիստը Դրեսդեն Բեկենբաուերի ժամանակներից»: Ֆոգտսի հրավիրած բեկնածուների մեջ կա չորս նորեկ՝ Շոլանդիցը, Բայելիկը, Մայերը եւ Հայենը: Թիմ է հրավիրված 27 մարդ՝ դարդասպահներ Դիրկ Հայենը («Բայեր»), Օլիվեր Կանը («Բավարիա»), Անդրեաս Կեղկեն (Այնտրախտ») եւ Բենոն Մայերը («Մյունխեն 1860»), դաստաններ Մարկուս Բաթելը, Թոմաս Հելմերը (երկուսն էլ՝ «Բավարիա»), Յուրգեն Կո�դը, Շտեֆան Ռոյթերը, Մաթիաս Զամմերը (բոլորն էլ՝ «Բորուսիա» Դ.), Մարտին Շոլանդիցը («Դոյչբուրգ») եւ Քրիստիան Վեները («Բայեր»), կիսադաշտանցներ՝ Երզ Ալբերտը («Համբուրգ»), Մարիո Բասլերը, Մարկո Բոդեն, Դիտեր Այլբը (բոլորն էլ՝ «Վերդեր»), Շտեֆեն Ֆոյցեը, Անդրեաս Մելլերը (երկուսն էլ՝ «Բորուսիա» Դ.), Թոմաս Հասլերը («Կայզերսլաուտեռն»), Մեհմեթ Շոլը, Թոմաս Շտրանցը, Քրիստիան Ցիգեն (բոլորն էլ՝ «Բավարիա») եւ ենս Թոտը («Դոյչբուրգ»), հարձակվողներ՝ Օլիվեր Բիրհոֆը («Ուդինեզե», Իտալիա), Ուլֆ Կիրստենը («Բայեր»), Յուրգեն Կլինսմանը («Բավարիա») եւ Շտեֆան Կոնցը («Բեհիրաբ» Թուրքիա):

«ՍՊՈՐՏ ԼՈՒՐԵՐ»

Գեորգի Կինկլաձեն Եվրոպայի հավաքականի կազմում

Վրաստանի հավաքականի եւ անգլիական «Մանչեսթր սիթի» ակումբի կիսապաշտպան Գեորգի Կինկլաձեն փետրվարի արդյունքների համաձայն մտցվել է Եվրոպայի խորհրդանշական հավաքականի կազմի մեջ: Ամսվա 11 լավագույն խաղացողներին որոշել են Անգլիան, Գերմանիան, Հոլանդիան, Բելգիան, Շվեյցարիան, Իսպանիան, Ֆրանսիան եւ Պորտուգալիան՝ ներկայացնող ֆուտբոլային 8 հրաստարակությունների լրագրողները: Սիա հավաքականի կազմը. Վիտոր Բայա («Պորտո»), Սերիի («Բարսելոնա»), Ալբերտ («Նյուքասլ»), Բլինդ («Այաքս»), Մագդինի («Միլան»), Մելլեր («Բորուսիա» Դ.), Պոռնեսկու («Բարսելոնա»), Կինկլաձե («Մանչեսթր սիթի»), դե լա Պենյա («Բարսելոնա»), Վեա («Միլան») եւ Բաստիստուտա («Ֆիորենտինա»):

Հիշեցնենք, որ վրաց ֆուտբոլիստը ճանաչվել էր Անգլիայի 1995 թ. 10 լավագույններից մեկը:

«ՍՊՈՐՏ ԼՈՒՐԵՐ»

Իսպանիայի առաջին դիվիզիոնից հեռացվեց 12-ոդ մարզիչը

Սերբ Դրագոսլավ Ստեպանովիչը դարձավ մարզիչներից 12-դը, որոնք ընթացիկ խաղաշրջանում հեռացվեցին Իսպանիայի առաջին դիվիզիոնի ակումբից: Քիլբաո խաղաձի «Ատլետիկ» թիմի դեկավարությունը նրան ազատեց դաստանից ազգային առաջնության վերջին տուրում «Վալենսիայից» 0:1 հաշվով դարտվելու հետեւանքով:

AFP, «ՍՊՈՐՏ ԼՈՒՐԵՐ»

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱՎԱԹԵՐ

Յուրի Զորկաեֆի թիմը կիսաեզրափակիչում

Եվրոպական ակումբային մրցաշարերից վերջինը խառոդ եզրափակիչի բնեց հանդիպումներ ավարտեցին Գավաթակիրների գավաթի խաղարկության մասնակիցներ: Կարելի է ասել, անակնկալ չգրանցվեց: Թեեւ կարելի է առանձնացնել Ֆրանսիայի գավաթակիր «Պարի Սեն Ժերմենի» հաղթանակը «Դարմայի» նկատմամբ, որը համարվում էր մրցաշարի գլխավոր խաղորիսը: Հիշեցնենք, որ «Պարմայում» հանդես է գալիս Եվրոպայի 1994 թ. լավագույն ֆուտբոլիստ Հորհան Սամիչկովը, որը դարձավ Իտալիայում տեղի ունեցած այն մրցակիցների առաջին հանդիպման միակ գոլի հեղինակը: Փաստորեն «Պարի Սեն Ժերմենը» հաղթեց 3-1 հաշվով եւ կիսաեզրափակիչ դուրս եկավ ընդհանուր ձեռ. բերեց: Յուրի Զորկաեֆը, որը հանդես է գալիս այս թիմում, լավ հնարավորություններ ունի դառնալու Եվրոպայի գավաթակիր:

Մոսկվայի «Դինամոն», որն առաջին խաղում սենսացիոն հարկի տակ 3-1 հաշվով գիջել էր Վիեննայի «Ռապիդ»-թիմին, արտաքին խաղում պարտվեց 0-3 հաշվով:

Հոլանդիայի «Ֆեյենորդը» իր խնդիրը կարելի է ասել, լուծել էր դեռ առաջին խաղում, 2-2 հաշվով ավարտելով հանդիպումը Մյունխենգլադբախի «Բորուսիայի» հետ: «Ֆեյենորդը» սենսացիոն հարկի տակ հաղթեց 1-0 հաշվով:

Առաջին հանդիպման արդյունքը վճռորոշ էր նաեւ իսպանական 2 թիմերի՝ Սարագոսայի «Ռեալի» եւ Լաս Պալմասի «Դեպորտիվոյի» միջեւ: Վերջինս հաղթել էր 1-0 հաշվով: Իսկ Սարագոսայում տեղի ունեցած հանդիպումն ավարտվեց 1-0 հաշվով: Կիսաեզրափակիչ առաջին հանդիպումները կայանալու են ապրիլի 4-ին, իսկ դասասխան հանդիպումները՝ երկու շաբաթ հետո: Վիճակահանությունը տեղի ունեցավ երեկ:

Մի լուր Մարի Պիրսից

Երբ Մարի Պիրսը դեռ Ինդիան Ուելսում չէ, ապա իր գործակալ Գավեն Ֆորբսն ապրեն այնտեղ է: Լուրերը թիվ 1 ֆրանսուհու մասին հետեւյալն են. «Մարին սիրում է «անջատվել» տարվա այս ժամանակահատվածում: Կոտ հոդածակին ընտելանալու փոխարեն՝ մինչեւ կանաչածածկ դաշտ վերադառնալը, նա որոշել է բաց թողնել հոդածածկ դաշտը եւ անմիջապես կենտրոնանալ կանաչածածկ դաշտի վրա: Նա կրկին հանդես կգա Հիլթոն Հեդում (ապրիլի 1-7-ը), այնուհետեւ կխաղա Իսլանդիայում (ապրիլի 8-14-ը), Red Cup-ի առաջին փուլում (ապրիլի 21-22-ը), Համբուրգում (ապրիլի 29-ից մայիսի 5-ը), Բեռլինում (մայիսի 13-19-ը) եւ «Ոլան Գարոսում» «Ռոմբլդոնցից» ու Օլիմպիական խաղերից առաջ: Իսպանացի լրագրողները, որոնք հույս ունեին տեսնել նրան Մադրիդում «Ոլան Գարոսից» մեկ շաբաթ առաջ, հասաս խաբված կլինեն. «Մադրիդյան մրցաշարի առնչությամբ մենք ոչ մեկի հետ որեւէ օրում չենք ունեցել», ասում է Ֆորբսը: Իսկ ինչ վերաբերում է հարավաֆրիկացի նոր մարզիչ Մայք Ուոթերսոնի հետ իր ունեցած կռվին, որը ոչեսք է վերանայվեր Իսաենի մրցաշարից հետո, ապա այն երկարաձգվել է. «Մարին եւ Մայքը կմնան միասին մինչեւ «Ոլան Գարոսի» վերջը, ասում է Գավեն Ֆորբսը, նրանք այս ոչսեին մի նոր ծեռքերում են իրականացնելու»: Առայժմ Մարի Պիրսն այս խաղաշրջանում հանդես է եկել ընդամենը երեք մրցաշարում, երկուսը՝ Մելբուռնում, մեկը՝ Կուբերտենում...

Ս. Ս.

digitised by A.R.A.R.@

«ՓԱՐՈՍ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Մակ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի ներկայացուցչության գրասենյակը Հայաստանում առաջնահերթ մարդասիրական օգնություն է բաշխում որոշակի կարգի փախստականների խմբերի: Նախկին Փախստականների հարցերի պետական կոմիտեի հիման վրա: Այժմ ստեղծված «Փարոսը», որը նոր համակարգ է, ի հայտ կբերի իսկական կարիքավորներին: Մարդասիրական օգնության գերակայող բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև գերագույն հանձնակատարի ներկայացուցչությունը կօգտագործեն կարիքավոր խմբերի, այդ թվում փախստականների վերաբերյալ «Փարոսից» ստացված տեղեկատվությունը: Դուք կկարողանաք օգնություն ստանալ, եթե միայն գրանցվեք «Փարոս» համակարգում: Գրանցումը շարունակվում է բոլոր հաղորդակցային, էրջանային եւ գյուղական սոցծառայության բաժիններում, որտեղ փորձառու մասնագետները կօգնեն ձեզ լրացնելու ընտանիքի սոցիալական անձնագիրը:

• Փախստականների գծով գերագույն հանձնակատարի ներկայացուցչությունը կոչ է անում բոլոր փախստականներին դիմել «Փարոսին» եւ գրանցվել: Գրանցման համար ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը:

Փախստականի քարտը, անձնագիրը, երեխաների ծննդյան վկայականները, բուսական գրքույկը (առկայության դեպքում), հաշմանդամի վկայականը (առկայության դեպքում), որը երեխաների համար ծնողների մահվան վկայականները, միայնակ մոր վկայականը (առկայության դեպքում), ամուսնալուծված կանանց պոռնիարգանի վկայականը (առկայության դեպքում), աշխատանքի վայրից ոչբարոյական տեղեկանք, գրանցման վայրի փոփոխման վերաբերյալ տեղական իշխանություններից տրված տեղեկանքը:

ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ: ՀԵՌ՝ 53-09-45, 59-76-43:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի «Հրազդան Աճառյան» համալսարանը, որպես Սեւծովյան երկրների համալսարանների մշակութային միջազգային միության հիմնադիր անդամ, կնշված ոլորտների համար՝ Աբենի, Թբիլիսիի, Մլաանի, Մարսելի, Վառնայի, Թեհրանի, Կիեւի եւ Թբիլիսիի համալսարանների, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ոլեսական ինստիտուտի, Փարիզի «Սարաֆ» ակադեմիայի, հայաստանյան համագործակցության եւ՝ վերածնունդ միության հետ 1996 թվականի հոկտեմբերին կազմակերպում է միջազգային գիտաժողով՝ նվիրված սեւծովյան երկրների ոլորտամշակութային կառուցի եւ Հայաստանում հիսունամյակ կրոն հայկելու 1700-ամյակին: Գիտաժողովին մասնակցել ցանկացողները մինչեւ մայիսի 30-ը ոլեսք է ներկայացնեն զեկուցման թեզիսները (մեկ էջ) եւ անգլերեն ամփոփումը (կես էջ)՝ տոպրակելու համար՝ նշելով անունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի վայրը եւ հեռախոսը:

Երեւանի «Հրազդան Աճառյան» համալսարանի հասցեն՝ Ալեք Մանուկյան 13, հեռախոսներ՝ 55-24-70, 55-67-90:

MEDECINS SANS FRONTIERES

OUVERTURE DE POSTE A MSF-BELGIQUE

FONCTION:	Interprète / traducteur
DESCRIPTION DU TRAVAIL:	Assister une psychologue dans le cadre de la mission de MSF-Belgique à l'hôpital psychiatrique et internat neurologique de Vardénis.
LIEU DE TRAVAIL:	Vardénis (5 jours de travail par semaine)
CONNAISSANCE DE LANGUE:	Français, Arménien, Russe

Les candidats concernés doivent présenter leur curriculum vitae avant le 29 mars 1996,
à l'adresse: rue Raffi 8a, Erévan. phone 56 53 08

Galeri ֆիրման առաջարկում է
MUZAFFER
Նոր արտադրության ՓՈՒՌ
Զերմապիճանի կարգավորումով
KUMTEL
Յուրահատուկ գնում
ֆիրմայի նվերով
Վաճառքի մենաշնորհը պատկանում է GALERI MUZAFFER-ին
ԹՈՒՐՔԻԱ, ՈՒՉԵ, ԿԱՉԻՄ ԿԱՐԱԲԵՔԻՐ ՓՈՂ. 9
Հեռ.՝ (0464) 217 13 62
217 28.92
Ֆաքս՝ (0464) 217 28 94

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 27-ին, ժամը 14-ին, Հայաստանի Գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա գրական ցերեկույթ նվիրված գրող Սաղաթել Հարությունյանի ծննդյան 75-ամյակին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

TOSHIBA 2100CT 486-DX2 անհատական գունավոր համակարգիչ եւ HP-320 գունավոր ասեղային տպիչ: Հեռախոս 63-53-30:

Второе объявление конкурса от 23.03.1996г.

Всем государственным, частным, арендным и кооперативным строительным организациям, зарегистрированным на территории Республики Армения

Приглашение к участию в конкурсе на право строительства жилых домов для беженцев

Наименование объектов:
строительство жилых домов в г.Мецамор
Заказчик:
Министерство социального обеспечения, занятости, миграции населения и вопросам беженцев-Департамент по вопросам беженцев-РА

Документы конкурса можно получить в офисе "Литтсмайер и партнер-Архитекторы" по адресу :
г.Ереван, ул.Айгедзори, 1-ый тупик, дом #14/1, тел. 27-85-77, AT&T 151 972

По тому же адресу заинтересованные организации могут получить дополнительную информацию до 27.03.1996г. с 10.00 до 13.00 часов (кроме выходных дней 23 и 24.03.96г.), сдача сведений о квалификации Вашей фирмы-28.03.1996г. с 9.00 до 11.00 часов.

Фирма L+P ARCHITEKTEN - Stamberg, Deutschland по поручению Министерства социального обеспечения, занятости, миграции населения и вопросам беженцев-Департамент по вопросам беженцев РА

ԱՅԱՔՍ
Ֆիրման ապրիլի 1-ից կազմակերպում է տուրիստական ուղեւորություն
Ե Գ Ի Պ Տ Ո Ս
Հաճելի շրջագայություն, շահավետ առեւտուր
ԿԱՀԻՐԵ - 3 գիշեր, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ - 4 գիշեր 650 ԱՄՆ դոլարի համարժեքով
ՊՈՐՏ ՍԱԻԴ - 3 գիշեր, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ - 4 գիշեր 665 ԱՄՆ դոլարի համարժեքով
Մայրիի երկրորդ կեսից կազմակերպում է կանոնավոր չվերթ ԵՎԱՊԻՈՒՍ
ՊԼՈՒԾԿԻՆԻ 43Ա 531573 524564

ՉԳՈՒՇԱՑԵՔ
դիֆթերիայի
վարակ կա
Այդ վարակից
միակ և ապահով
պաշտպանության միջոցը
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ Է
Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանի՝ հանրապետության ողջ բնակչությանը (բոլոր տարիքային խմբերին) առաջարկվում է պատվաստվել դիֆթերիայի դեմ:
Դիմեք Ձեր տեղամասային պոլիկլինիկանները, որոնք USAID կազմակերպության աջակցությամբ, ապահովված են պատվաստանյութով և միանվագ սրսկիչներով:
Ինչո՞ւ պատվաստվել վաղը, եթե կարելի է այսօր:

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ձեռնարկությունների առաջարկի եւ պահանջարկի մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Աբովյան 49 հասցե: Տպաքանակ 3000 Ստորագրված է տպագրության 22.03.1996 Գին՝ 75

digitised by A.R.A.R.@